Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավեր
/Խորհրդատվական ծառայություններ, կազմակեպության ընտրություն/

ՀՎԷԷՀ-ի կողմից իրականացված էներգախնայողական /ԷԽ/ ներդրումների վերաբերյալ սոցիալական հարցման անցկացում, EE-CS-14/2016

Երկիրը՝ Հայաստան
Ծրագրի անունը՝ Էներգախնայողության ծրագիր
Դրամաշնորհ՝ TF 012163

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից /Գլոբալ բնապահպանական հիմնադրամի միջոցներով/ ստացել է դրամաշնորհ Էներգախնայողության ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու համար:

Նպատակը: ՏԱ-ի նպատակն է անցկացնել վիճակագրական սոցիալական հարցում շահառուների շրջանում, որոնք ներգրավված են ԷԽ Ծրագրի մեջ՝ գնահատելու ԷԽ ներդրումների ազդեցությունը նրանց վրա:

Հիմնական Առաջադրանքները: Անհրաժեշտ է անցկացնել 2012-2015թ.թ. ԷԽ Ծրագրի բոլոր շահառուների վիճակագրական հետազոտություն և ներկայացնել այն ձևաչափով, որը կարող է ծառայել որպես մարքեթինգի և իրազեկության բարձրացման գործիք:

Առաջադրանք 1: Վերանայել ՎԷԷ Հիմնադրամի Էներգետիկ Ծառայությունների Մատուցման Համաձայնագրի մոդելը, իրականացված աշխատանքները /ծրագրերը և ընթացիկ Էներգախնայողության Ծրագրի ներքո արձանագրված արդյունքները: Մշակել ժամկետները, մեթոդաբանությունը, վիճակագրական հարցման օրինակելի ձևի հարցաշարը:

Առաջադրանք 2: Հիմնվելով պատրաստված և համաձայնեցված մեթոդաբանության և հարցաշարերի վրա, ուսումնասիրել ԷԽ Ծրագրի շահառուների կարծիքը / ընկալումը: Այն պետք է ընդգծի հարմարավետության և շահագործման փոփոխությունները, բացահայտի վարքագծի փոփոխությունները, օգտվողների գոհունակությունը և իրազեկվածությունը էներգախնայողության միջոցառումների վերաբերյալ:

Առաջադրանք 3: Անցկացնել կապալառուների կարծիքների հետազոտություն ԷԽ Ծրագրի գնումների և ֆինանսավորման մեխանիզմի վերաբերյալ, նրանց աշխատակազմի կարողությունների փոփոխությունների, ԷԽՄ տեխնոլոգիաների իրազեկվածության, տեղական շուկայի փոփոխությունների և այլ համապատասխան տեղեկությունների վերաբերյալ, որոնք կարող են վեր հանել էներգախնայողության ներդրումների ներկայիս մոդելի առավելություններն ու թերությունները:

Առաջադրանք 4: Նախապատրաստել հաշվետվության նախագիծ՝ հիմնվելով հավաքագրված տեղեկությունների վրա: Անցկացնել համապատասխան համեմատություններ և վերլուծություններ:

Առաջադրանք 5: Ներկայացնել արդյունքները ppt կամ media ֆորմատով:

Առաջադրանքի իրականացման մոտավոր տևողությունը կազմում է մոտ 90 օր:

Հիմնադրամը, որն հանդիսանում է ծրագրի իրականացման գործակալությունը հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին (խորհրդատուներ) ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը նշված ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված խորհրդատուները պետք է տեղեկություններ տրամադրեն այն մասին, որ ունեն ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ որակավորում և համապատասխան փորձ: Ընտրության չափանիշներն են՝

Խորհրդատվական ընկերության ընդհանուր փորձառությունը սոցիալական հարցման և վիճակագրական հետազոտության ասպարեզում– 40 միավոր

Խորհրդատվական ընկերության հատուկ փորձառությունը էներգախնայողության ոլորտի սոցիալական հարցման ասպարեզում - 60 միավոր

Խորհրդատուն ուշադրություն պետք է դարձնի Համաշխարհային Բանկի՝ ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ փոխառությունների և դրամաշնորհների ներքո Համաշխարհային Բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրությունը և վարձումը 2011թ. հունվարի Խորհրդատուների Ուղեցույցի (Խորհրդատուների ուղեցույց) 1.9-ը կետին, որը սահմանում է Համաշխարհային բանկի շահերի բախման քաղաքականությունը:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկության կամ ենթախորհրդատուի ձևով՝ իրենց որակավորումը բարձրացնելու նպատակով: Խորհրդատուն կընտրվի խորհրդատուի որակավորման վրա հիմնված (ԽՈԸ) ընտրության մեթոդով, որն ամրագրված է խորհրդատուների ընտրության ՀԲ Ուղեցույցում:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով, տեղական ժամանակով ժամը 9:00-17:00-ը:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել ստորև նշված հասցեով մինչև **2016թ. փետրվարի 1–ը,** տեղական ժամանակով ժամը 18:00:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, տուն 32
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել
+ (37410) 588 011 ժամը 09.00-ից մինչև 18.00-ը
Զարուհի Ղարագյոզյանին
և այցելել հիմնադրամի կայքը՝ www.r2e2.am
Ֆաքս + (37410) 588 011
Էլ. փոստ g.zara@r2e2.am
zaruhigharagyozyan@yahoo.com